

ՄՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՄԱՅՐ ՏԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Մոնթրեալ, 25 Փետրուար 1980

ԳԵՐԱՇՆՈՐՀ

ՏԷՐ ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Հայոց

եւ Նախագահ Թեմական Խորհուրդի Արեւմտեան Թեմի

Նիւ Եորք

Սիրելի Սրբազան,

Ինչպէս նախպէս Ձերդ Սրբազնութեան տեղեկացուցած էինք, համայնքիս Տարեկան Ժխական Ժողովը այս տարի, զումարուեցաւ երկու հանգրուանով: Ժողովը սկսաւ Կիրակի, 10 Փետրուար 1980, ժամը յետ միջօրէի 3-ին եւ վերջացաւ նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին, սպառելով օրակարգի հարցերը, ի քացառեալ ընտրութիւններէն: Ժողովը շարունակուեցաւ յաջորդ Կիրակի, Փետրուար 17-ին, ժամը 1-6 ի միջեւ, որուն ընթացքին տեղի ունեցան ընտրութիւնները Ժխական Խորհուրդի չորս, Ընտրողական Յանձնախումբի հինգ եւ Հաշուեքննիչ Մարմնի երեք անդամներու:

Ներփակ Ձերդ Սրբազնութեան կ'ուղարկենք Ժխական Ժողովին ներկայացուած տեղեկագիրները, ելեւմտական հաշուեկշիռները, որոնք կը պարփակեն նաեւ անդամներու ղրկուած հրաւերն ու օրակարգը:

Ներփակ կ'ուղարկենք նաեւ, Ժխական Ժողովի ընտրութեանց արդիւնքները, քուէարկութեան յատուկ թուղթէն օրինակ մը՝ թեկնածուներուն անուաներով եւ իրենց ստացած քուէներով: Ինչպէս նաեւ Թեմական Պատգամաւորներու անուաները, հասցէները եւ հեռածայնի թիւերը, Եկեղեցական Կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներուն անուաները, հասցէները իրենց հեռածայնի թիւերով:

Սիրելի Սրբազան Հայր, ժողովները տեղի ունեցան ամենայն կանոնաւորութեամբ եւ կարգապահութեամբ զնահատուելով բոլորին կողմէ անխտիր:

Արդ, Սրբազան Հայր, վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, որոնք կը յանձնենք Ձեր ուշադրութեան եւ կը սպասենք Նոր անդամներու վաւերացումը:

Մեր որդիական անկեղծ զգացումներով
Մատչելով ի համբոյր Ձեր Սուրբ Աջոյն

Կարէտ Կրդ. Երէցեան
Պարէտ Կրդ. Երէցեան